Գառնիկ Ստեփանյան, Հրաչյա Աճառյան: Կյանքը և գործը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, 344 էջ:

Գրախոսվող մենագրության տիտղոսաթերթում կարդում ենք երկու անուն՝ Գառնիկ Ստեփանյան (1909-1989) և Հրաչյա Աճառյան (1876-1953), որոնք հայ բանասիրության երախտավորներից են, և շատ նշանակալից է, որ տարիների մտերմությունն ու ջերմ փոխհարաբերությունները նրանցից կրտսերին իրավունք և հնարավորություն են ընձեռել իր երախտիքի ու գնահատանքի տուրքը մատուցելու ավագ գործընկերոջ անգնահատելի վաստակին: Այս հայտնի անունների համատեղումը տիտղոսաթերթի վրա առավել ևս խորհրդանշական է, քանի որ նրանց վիճակված է եղել արժանանալ համանման ճակատագրի: Լինելով ծագումով արևմտահայ՝ նրանք վերապրել են եղեռնի հետևանքներն ու աստանդական կյանքի դժվարությունները, կրել ծանր աշխատանքով հաց վաստակելու «դառնությունն ու քաղցրությունը», սակայն երջանկություն են ունեցել ի վերջո հանգրվանելու մայր հայրենիքում և իրենց ամբողջ կյանքն անմնացորդ նվիրաբերելու հայրենի գիտության զարգացմանը:

Ակադեմիկոս Աճառյանը ականավոր լեզվաբան-հայագետ է, հայ նոր լեզվաբանության ակունքներում կանգնած հսկա, որից սկիզբ է առնում հայերենի պատմահամեմատական քերականության, հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության համակարգված քննությունը, Ստեփանյանը նշանավոր բանասեր է, գրականագետ, արվեստի տեսաբան (արվեստագիտության դոկտոր), թատերագետ, խմբագիր-հրատարակիչ, թարգմանիչ, կենսագիր, նույնիսկ հուշագրական վեպի հեղինակ:

Ուստի զարմանալի չէ, որ այս մենագրությունը գրված է գեղարվեստական երկի և գիտական հետազոտության ներդաշնակ միասնությամբ: Համեմատաբար սահմանափակ ծավալում հեղինակը ոչ միայն կերտում է Հ. Աճառյանի կերպարը, ի ցույց դնում նրա մարդկային նկարագիրը, անցած ուղին, ամենայն մանրամասնությամբ ու անաչառ վերլուծությամբ ներկայացնում նրա գիտական վաստակը, այլև տալիս է լեզվաբանի ապրած ժամանակաշրջանի բնութագիրը, որին խիստ բնորոշ էին պատմաքաղաքական և հասարակական հակասությունները, պետական գաղափարախոսության բիրտ կաշկանդումները, հաճախ ստեղծագործ մտքի համար անընդունելի սահմանափակումները, հալածանքներն ու անարդարությունները: Միևնույն ժամանակ մեր առջև հառնում է ազնիվ գիտնականը, որը, չնայած կրած դժվարություններին ու ստիպումներին, նույնիսկ բանտարկությանը, հավատարիմ է մնացել իր համոզմունքներին ու սկզբունքներին, և չնայած ֆիզիկական վատառողջ վիճակին, ընտանեկան դժբախտություններին ու հասարակական ճնշումներին՝ գիտության մեջ և կյանքում եղել է հոգեպես աներեր ու անզիջում իր բարոյական

նկարագրով, թեև օժտված էր մեղմ ու բարեհամբույր բնավորությամբ։

Գիրքը ունի հետաքրքրական և միաժամանակ տրամաբանված կառուցվածք։ Այն բաժանված է առանձին գլուխների՝ խոսուն վերնագրերով («Մանկություն», «Կենտրոնական վարժարանում», «Դեպի կյանք», «Թափառական կյանքի տարիներ» և այլն), որոնք արտացոլում են Հ. Աճառյանի կյանքի շրջադարձային փուլերը։ Նրա կյանքի յուրաքանչյուր նշանակալից հատվածի նկարագրությունից հետո հեղինակը բանիմացորեն վերլուծում է տվյալ ժամանակաշրջանի նրա գիտական գործունեությունը, մատնանշում նաև գիտության մեջ նրա նվաճած նոր բարձունքները։

Հ. Աճառյանի գիտական հետաքրքրությունները ձևավորվել են շատ վաղ, դեռևս աշակերտական նստարանից։ Ինչպես նշում է կենսագիրը՝ Կ. Պոլսի «Կենտրոնական վարժարանում սովորելու հենց առաջին տարվանից Հ. Աճառյանը խանդավառվել էր հնդեվրոպական լեզվաբանությամբ» (էջ 35), իսկ առաջին հոդվածը տպագրել է 1895 թ., երբ ընդամենը 19 տարեկան էր։ Այնուհետև հաջորդում են կարճատև ուսուցչությունը ազգային դպրոցներում և ուսումնառության տարիները արտասահմանում այնպիսի նշանավոր հայագետների մոտ, ինչպիսիք էին Անտուան Մեյեն ու Հայնրիխ Հյուբշմանը։ Այստեղ է, որ նա հասու է լինում ժամանակի հնդեվրոպաբանության բարձրագույն նվաճումներին, որոնք նա իր ամբողջ կյանքի ընթացքում զարգացրել է հայագիտության բնագավառում, անկախ այն բանից, թե ինչ դիրք է զբաղեցրել, սկսած հասարակ ուսուցչից մինչև համալսարանի դասախոսի, ամբիոնի վարիչի և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսի։ Գրքում տեսնում ենք նրա հայացքների և հետազոտական սկզբունքների աստիճանական ձևավորումն ու խորացումը, նրա աշխատություններում ընդգրկված հարցերի լայն շրջանակը և դրանց լուծումը ժամանակի գիտական չափանիշների ամենաբարձր մակարդակով։

Այստեղ մեր նպատակը չէ վերաշարադրել Գ. Ստեփանյանի մենագրության բովանդակությունը, Աճառյանի կենսագրության, ինչպես նաև գիտության մեջ նրա առաջընթացի մանրամասները՝ թողնելով, որ ընթերցողն ինքը հասու լինի այդ ամենին։ Նշենք միայն այն հիմնական արժանիքները, որոնք գիրքը հետաքրքրական են դարձնում թե՛ մասնագետ բանասերների, թե՛ ուսանողության և թե՛ ցանկացած ընթերցողի համար, որն անտարբեր չէ մեր ազգային արժեքների նկատմամբ։

Հ. Աճառյանի գիտական վաստակը, որից մեծապես օգտվել են հայ լեզվաբանների ու բանասերների բազում սերունդներ, գնահատվել է շատերի կողմից։ Գիտության մշակները հղել են նրա՝ իբրև ամենահեղինակավոր լեզվաբանի աշխատությունները, մեջբերումներ կատարել դրանցից, ավելին՝ հոդվածներ, հետազոտություններ, անգամ նաև ատենախոսություններ նվիրվել նրա գիտական գործունեության այս կամ այն բնագավառին, գուցե և ավելի մանրամասն ու գիտական վերլուծության տեսակետից ավելի խոր, բայց գրախոսվող գրքի առաջին կարևոր արժանիքը Հ. Աճառյանի կերպարի ամբողջացումն է, ի դեմս նրա՝ երիտասարդ սերնդին ներկայացնելը հայ մտավորականի վառ օրինակը, նրա նվիրվածությունը գիտությանը, անսահ-

ման աշխատասիրությունը, սկզբունքայնությունը, բծախնդրությունը փաստական նյութի հավաքման ու վերլուծության մեջ, նրա գիտական հետաքրքրությունների զարմանալի լայն շրջանակը, բազմաթիվ լեզուների գիտական ու գործնական իմացությունը։ Միաժամանակ խորապես հուզիչ է նրա նվիրվածությունն ու երախտագիտական ջերմ զգացումը իր ուսուցիչների հանդեպ՝ սկսած Կ. Պոլսի դպրոցներից մինչև Փարիզ և Ստրասբուրգ, որտեղ նա վայելել է ժամանակի մեծ լեզվաբանների հոգատարությունն ու օժանդակությունը։ Որպես դրա տրամաբանական շարունակություն՝ նա ևս նույնքան հոգատար և ուշադիր է եղել իր շնորհալի աշակերտների նկատմամբ, որոնցից շատերը հետագայում դարձել են նշանավոր գիտնականներ և նոր աստիճանի բարձրացրել հայ լեզվաբանությունը։

Գրքի մյուս կարևոր արժանիքն այն է, որ Հ. Աճառյանի անցած ուղին ներկայացվում է հայ ազգային-մշակութային կյանքի համայնապատկերի վրա, թե՛ նրա ծննդավայրում՝ Կ. Պոլսում և ընդհանրապես Արևմտյան Հայաստանում և թե՛ հետագայում՝ Արևելյան Հայաստանում և Հայաստանի Խորհրդային հանրապետությունում։ Մենք տեսնում ենք, թե ինչպիսի լայն ընդգրկում ուներ դպրոցական գործը Արևմտյան Հայաստանում, ինչպիսի նշանավոր անձինք են դասավանդել շարքային դպրոցներում, ծանոթանում ենք, թեկուզ և հպանցիկ, ազգային մշակույթի, գրականության ու կրթության նշանավոր գործիչներին, որոնք թուրքական բռնապետության և ամենուր թափանցող գրաքննության, մշտական ճնշումների ու պարբերական կոտորածների պայմաններում ուժերի ներածին չափ և ավելին նպաստել են հայ ժողովրդի պահպանության ու լուսավորության գործին։ Այդ ժամանակ էր, որ ծաղկում էին արևմտահայ գրականությունը, թատրոնը, լրագրությունը, ազգային-հասարակական, գիտական ու գեղարվեստական բնույթի պաբերականները։

Ճիշտ նույնպիսի նվիրվածություն և խանդավառություն էր տիրում նաև Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների կազմավորման ժամանակաշրջանում հայ մտավորականների՝ գիտության, գրականության, արվեստի նշանավոր գործիչների շրջանում, որոնք, լինելով ժամանակի առաջադեմ մտածողներ ու գործիչներ, արտասահմանի նշանավոր կենտրոններում կրթություն ստացած և գիտության ու արվեստի մեջ արդեն իսկ մեծ ներդրում ունեցող մարդիկ, հավաքվել էին հայրենի հարկի տակ՝ իրենց նպաստը բերելու մշակույթի ու գիտության զարգացմանը՝ չվախենալով դժվարություններից, եղեռնի և պատերազմի արհավիրքներից քայքայված տնտեսությունից, կենցաղային դժվարագույն պայմաններից։ Գրքում տեսնում ենք, թե ինչ երազանքով էր Հ. Աճառյանը սպասում Հայաստանի պետական համալսարանի բացմանը, որտեղ նա անսահման նվիրվածությամբ աշխատել է մինչև կյանքի վերջին օրերը, թեև, ցավոք, ժամանակի քաղաքական ու գաղափարախոսական ճնշումների հետևանքով այդ աշխատանքն ունեցել է նաև ընդհատումներ։ Դարձյալ ակնհայտ է դառնում, թե ինչպիսի տոկունությամբ է նա տանում այս անգամ արդեն հայրենի երկրում տիրող ճնշումներն ու հալածանքները՝ ինչպես վերադասների, այնպես էլ իր գործընկերների և, ցավալիորեն, նաև իր որոշ աշակերտների կողմից կիրառվող։

Սակայն ի պատիվ Հ. Աճառյանի՝ հարկ է մանրամասնել, որ նա երբեք չի իջել իրեն քննադատողների մակարդակին, ի տարբերություն նրանց՝ չի գրել «մերկացնող ու դատապարտող» հոդվածներ, և որ ամենակարևորն է, գեթ մեկ քայլ անգամ չի նահանջել իր սկզբունքներից, ուստի և հարկ է այստեղ ընդգծել գրքի թե՛ գիտական և թե՛, մանավանդ, բարոյական արժեքը։

Այն, որ մենագրությունն ունի նաև գիտական մեծ արժեք, նույնպես կասկածից վեր է, քանի որ հեղինակը բանասերի ու լեզվաբանի իր կրթությամբ և լայն մտահորիզոնով կարողացել է մասնագիտական բարձր մակարդակով ներկայացնել Հ. Աճառյանի հայացքներն ու ըմբռնումները, նրա հսկայական ներդրումը հայագիտության մեջ։ Կարելի է ասել, որ այս գիրքը կարող է նաև գրավիչ ձևով շարադրված յուրօրինակ դասագրքի դեր կատարել հայ բանասեր ուսանողության համար՝ բազմակողմանի գիտելիքներ հաղորդելով նրանց հայոց լեզվի պատմության, համեմատական քերականության, լեզվական առնչությունների, բարբառագիտության, ստուգաբանության, բառարանագրության, բնագրերի քննության և այլ հարցերի վերաբերյալ՝ միաժամանակ ներայացնելով այդ բնագավառների զարգացման մեջ նրա հիմնարար դերը։

Հարկ է նաև նշել, որ նույնիսկ Հ. Աճառյանի նման մեծության նկատմամբ ունեցած ակնածանքն ու սերը չեն խանգարել հեղինակին շրջանցելու նրա աշխատանքներում տեղ գտած որոշ թերություններ, օրինակ՝ բարբառների նկարագրությանը վերաբերող վաղ աշխատություններում, երբ բավականաչափ սկզբնաղբյուրներ չունենալու պատճառով նա ստիպված է եղել բավարարվել մեկ-երկու բարբառախոսների վկայություններով։ Կենսագիրն անդրադառնում է նաև մամուլում եղած թե՛ դրվատական և թե՛ քննադատական դիտողություններին՝ ի հայտ բերելով գիտական անաչառություն և նրբանկատություն։ Նույն նրբանկատությունն է մղել հեղինակին խուսափելու մառականության տիրապետության ժամանակաշրջանում Հ. Աճառյանին քննադատողների և մեղադրողների անունները հիշատակելուց և դատապարտող բնութագրումներից՝ նրանց վարքագիծը թողնելով պատմության դատին, ինչպես վարվել է ինքը՝ Աճառյանը, որը Մառի տեսության մերժումից ու խստագույն քննադատությունից հետո ևս երբեք հանդես չի եկել նրա նախկին ջատագովների և անձամբ նրա դեմ՝ միշտ գնահատելով նրան որպես հայագիտության մեջ նշանակալից ավանդ ունեցող գիտնականի։

Ամփոփելուց առաջ կցանկանայի նշել նաև Գ. Ստեփանյանի գրքի գեղարվեստական արժանիքները՝ աշխույժ շարադրանքը, Հ. Աճառյանի կենսագրական հուզիչ պահերի, կենցաղային մանրամասների նկարագրությունները, մարդկային բնավորության առանձնահատուկ կողմերն ընդգծող հետաքրքրաշարժ կամ զվարճալի պատմությունների առկայությունը, որոնք գիտական լուրջ բնութագրումների հետ մեկտեղ առանձնահատուկ հմայք են հաղորդում մեծ լեզվաբանի կերպարին։

ԼԻԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ